ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

ЗАМЕСТИТЕЛЬ МИНИСТРА ОБОРОНЫ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

DEPUTY MINISTER OF DEFENCE OF THE REPUBLIC OF ARMENIA

«31» 10 2018թ.

№ Պ/Ա/4174

«Մագիստրալ նախագիծ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ 02228296)
հասցե՝ ք. Երևան, Մայիսի 9, 51/1 շ, 42 բն
էլ. հասցե՝ magistral.nakhagits@yahoo.com

ՀՀ պաշտպանության նախարարության և «Մագիստրալ նախագիծ» ՍՊԸ միջև 05.06.2018թ. կնքված N ԳՀԾՁԲ-8/7-2 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) շրջանակներում Ձեր կողմից պետք է մատուցվեր ընդհանուր 35 հատ միագույն պատճենահանող մեքենաների սպասարկման ծառայություններ, որից 12 հատը 2-րդ եռամսյակում, 12 հատը 3-րդ եռամսյակում և 11 հատը 4-րդ եռամսյակում, սակայն մատուցվել է ընդամենը 8 հատ միագույն պատճենահանող մեքենաների սպասարկման ծառայություններ 3-րդ եռամսյակում:

Հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.3 կետի «բ» պարբերության պահանջը՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը Պայմանագրի 2-րդ եռամսյակում 12 հատ, 3-րդ եռամսյակում 4 հատ և 4-րդ եռամսյակում 11 հատ միագույն պատճենահանող մեքենաների սպասարկման ծառայությունների մասով 2018թ. սեպտեմբերի 18-ի դրությամբ միակողմանի մասնակի լուծել է Պայմանագիրը:

Տեղեկացնում եմ, որ «Մագիստրալ նախագիծ» ՍՊԸ-ն պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005028106 հաշվեհամարին փոխանցել 2352 ՀՀ դրամը որպես տույժ՝ Պայմանագրի 5.3 կետի համաձայն, ինչպես նաև վերոնշյալ ժամկետում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005000758 հաշվեհամարին ենթակա է գանձման 17150 ՀՀ դրամը որպես տուժանք՝ պայմանագրի կատարման ապահովում:

Մ. ՂԱՄԲԱՐՅԱՆ

0044, Երևան, Բագրևանդի 5, Հեռ.՝ (+374 10) 29 45 45, Ֆաքս՝ (+371 10) 29 46 13, Էլ.փոստ՝ depart@mil.am
Ереван, Багреванда 5, 0044, Тел: (+374 10) 29 45 45, Факс. (+374 10) 29 46 13, Эл.почта: depart@mil.am
0044, 5 Bagrevans Str., Yerevan, Tel. (+374 10) 29 45 45, Fax: (+374 10) 29 46 13, E-mail: depart@mil.am